

<b>[1] Դուրս գրման ամսաթիվ</b>			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			<b>[2] Սերիա</b>		<b>[3] Համար</b>	
25	Հուլիս	2018 թ.				Բ		9474332124	
<b>[4] Մատուցման ամսաթիվը</b>						Ճշգրտվող հաշիվ վավերագրի			
25	Հուլիս	2018 թ.				Սերիա		Համար	
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
<b>Պայմանագիր</b>			<b>[5] Կնքման ամսաթիվ</b>			<b>[6] Համար</b>			
<b>[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)</b>									
<b>[7.1] ՀՊՄ կտրոսի համար</b>									

<b>Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի</b>												
<b>[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)</b>					0	3	5	3	8	1	1	2
<b>[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը</b>												
<b>[10] Անվանումը</b>			«ՎԻ ԳԲՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
<b>[11] Բանկային տվյալները</b>			Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200							
<b>[12] Գտնվելու վայրը (հասցեն)</b>			Յոդ միկ. շք. 23 18									
<b>[13] Լրացուցիչ տվյալներ</b>												

<b>Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի</b>												
<b>[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)</b> (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3
<b>[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը</b>												
<b>[16] Անվանումը</b>			«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
<b>[17] Բանկային տվյալները</b>			ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործառն. վարչ.		N 900011000834							
<b>[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)</b>			ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
<b>[19] Լրացուցիչ տվյալներ</b>												
<b>[20] Ում միջոցով</b>			<b>Անուն, ազգանուն</b>									
			<b>Լիազորագիր</b>		<b>Համար</b>							
					<b>Ամսաթիվ</b>							

<b>[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը</b>						
№№ Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակակիցը	Միավորի գինը	Զեռչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Գրավոր միջին բարդության թարգմանություն վրացերենից հայերեն	էջ	101.85	2975		303003.75
2	Գրավոր միջին բարդության թարգմանություն հոլանդերենից հայերեն	էջ	31.92	11950		381444
3	Գրավոր միջին բարդության թարգմանություն հունարենից հայերեն	էջ	65.31	5450		355939.5
4	Գրավոր միջին բարդության թարգմանություն հայերենից չինարեն	էջ	17	13400		227800
5	Գրավոր միջին բարդության թարգմանություն շվեդերենից հայերեն	էջ	22.16	15350		340156
<b>Ընդամենը</b>						1608343.25

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)  
**STEPANYAN HMAYAK 2301850293**  
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող  
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

29.03.2017թ

ք.Արուսյան

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արուսյանի քննչական բաժնի քննիչ Հ Կարապետյանս, վերանայելով վարույթիս թիվ 20182116 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2016թ.-ի դեկտեմբերի 12-ին ժամը 22.00-ից մինչև 23:30-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը տիրացել է Կերին Պտղնի գյուղի վարչական տարածքում գտնվող եղեմ հյուրանոցի մոտ կայանված Գիորգի Խոսերովիչի Տոպարիդզեին պատկանող Range Rover մակնիշի SB587BS հաշվառման համարանիշի ավտոմեքենային ու փախցրել այն, որի արդյունքում վերջինիս պատճառվել է առանձնապես խոշոր չափերի, ընդհանուրը՝ 30.000 ԱՄՆ դոլարին համարժեք 14.250.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄԿ Արուսյանի բաժնում 19.12.2016թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 20182116 քրեական գործը, որը 15.12.2016թ.-ին. ուղարկվել է Արուսյանի քննչական բաժնի, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Կրաստանի հյուպատոսարանից Արուսյանի քննչական բաժնի է հասցեագրվել հափշտակության դեպքի վերաբերյալ տեղեկատվություն պահանջող գրություն, որին ի պատասխան Արուսյանի քննչական բաժնից ՀՀ-ում Կրաստանի հյուպատոսարան է ուղարկվում պատասխան գրություն:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է Կրաստանի հյուպատոսարան ուղարկվող գրությունը հայերեն լեզվից թարգմանել վրացերեն լեզվով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 20182116 քրեական գործով թարգմանիչ հրավիրել «Կի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից լիազորված թարգմանիչ Նելի Թոռչյանին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և վրացերեն գրավոր և բանավոր լեզուներին:

2.Նելի Թոռչյանին բացատրել ՀՀ քրեական դատավարության օր-ի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ականհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Արուսյանի քննչական բաժնի քննիչ՝

Հ.Կարապետյան

Սույն որոշումը ինձ ծանոթացվեց և նախազգուշացվեց սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Թարգման ճանաչելու մասին

«07» փետրվարի 2018թ.

ք. Երևան

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Շ.Գրիգորյանս, վերանայելով վարույթում գտնվող թիվ 13841815 քրեական գործի նյութերը

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

03.11.2015թ. Կարեն Չանտալի Ռայմաքերսին և 04.11.2015թ.-ին Գագիկ Վլադիմիրի Հովհաննիսյանը ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն հաղորդումներ են տվել այն մասին, որ Արամ Արթուրի Հայրիյանը խաբեության և վստահությունը չարաշահելով եղանակով իրենցից ստացելու հափշտակել է համապատասխանաբար՝ 3473 եվրոյին համարժեք 1.792.000 ՀՀ դրամ գումար և 550.000 ՀՀ դրամ գումար:

Դեպքի առթիվ 13.11.2015թ. ՀՀ ՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններ քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 13841815 քրեական գործը:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հայերեն թարգմանել հուանդերեն տպագիր նյութեր, իսկ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել Սամվել Վաչագանի Ղռաթյանին /ծնվ. 15.01.1958թ., անձնագիր AK 0434802, տրված 013-ի կողմից 03.02.2010թ. /:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածներով

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթում գտնվող թիվ 13841815 քրեական գործով թարգմանիչ ճանաչել Սամվել Ղռաթյանին:
2. Սամվել Ղռաթյանին պարզաբանել ՀՀ Քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Շ.Գրիգորյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս. Ղռաթյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ԹԱՐԳԱՄՆԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

15 մարտի 2018թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ, Ս.Մարգարյանս, քննարկելով վարույթում քննվող թիվ 58154617 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

27.10.2016թ. Շվեդիայի «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային ռեզեկատվական կենտրոն»-ից «-ում գործող նշված ռեզեկատվական կենտրոնում հարցում : ստացվել Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի կողմից 15.04.2004թվականին Ադիլ Բեմիի Կոնակեսին շնորհված ԱԴ058617 դիպլոմի իսկությունը ստուգելու վերաբերյալ: Տվյալ կենտրոնի կողմից ԵՊՀ կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ նշված դիպլոմը կեղծ

Դեպքի կապակցությամբ «Նուստիկանության ԿՀԴՊԳ վարչությունում նախապատրաստված նյութերով «Քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով ռարուցվել է թիվ 58154617 քրեական գործը:

12.05.2017թ. թիվ 58154617 քրեական գործը ստացվել է «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն և վարույթ ընդունվել:

Գործի քննության ընթացքում նշանակվել է դատափաստաթղթաբանական փորձաքննություն, ինչպես նաև գործով մի շարք էական հանգամանքները պարզաբանալու նպատակով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցում է ուղարկվել Շվեդիայի Թագավորության իրավասու մարմնին:

Հետագա նախաքննության ընթացքում՝ հանցագործությունը բացահայտելու, հանցանք կատարած անձի /անձանց/ ինքնությունը պարզելու նպատակով համապատասխան հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմնին, որտեղից ստացված պատասխան գրության համաձայն ձեռնարկված միջոցառումները դրական արդյունք չեն տվել և հանցագործությունը չի բացահայտվել:

20.06.2017թ. նկատի ունենալով, որ քրեական գործով կատարվել են անհրաժեշտ և հնարավոր բոլոր դատավարական գործողությունները, սակայն չի պարզվել որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը, ուստի քրեական գործով վարույթը «Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցվել է:

21.07.2017թ. քրեական գործը՝ որոշման օրինականությունը ստուգված վիճակում ստացվել է «ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչություն:

«Քննչական կոմիտեից ստացված Շվեդիայի Թագավորության իրավասու մարմնի կողմից իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ ձեռք բերված նյութերը թարգմանելու նպատակով ուղարկվել են «ՔԿ դեպարտամենտ:


13.03.2018թ. «Քննչական կոմիտեից գրություն է ստացվել այն մասին, որ գործով թարգմանություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է թարգմանիչ ներգրավվելու մասին որոշում: Հայտնվել է նաև, որ թարգմանությունը կատարելու է "ՎԻ-ԳՐՈՒՊ" ՍՊԸ թարգմանիչ Ցարոսլավա Սկորիկովան:

15.03.2018թ. քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:  
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15  
և 55-րդ հոդվածների պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1. Սույն գործով որպես թարգմանիչ ներգրավել "ՎԻ ԳՐՈՒՊ" ՍՊԸ թարգմանիչ Յարուսլա Սկորիկովաին:
2. Անա Տեր-Օգանեսյանին պարզարանել ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդ. նախատեսված թարգմ. իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338 հ. ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվութ. մասին:

Ավագ քննիչ



Ս. Մարգարյան

թարգմանիչ



ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

06.04.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության մայրը Ն.Վ.Շահինյանս, վերանայելով վարույթիս թիվ 58200513 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Շիրակի մարզի բնակիչներ՝ էդգար Միշայի Իսրայելյանը /ծնվ. 01.10.1985թ./, Արսյուն Փորայի Գևորգյանը /ծնվ. 18.02.1976թ./, Արկաղի Գրիշայի Խաչատրյանը /ծնվ. 14.01.1979թ./ և Եղիշե Համետի Խաչատրյանը /ծնվ. 24.12.1982թ./, ղեռնս 2001թ. ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հետախուզման մեջ գտնվելով, ՀՀ ոստիկանության ԲԳՎ Շիրակի մարզի քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում, 2007թ. տարբեր ժամանակահատվածներում իրենց լիազոր տարբեր անձանց միջոցով տարածքային զինկոմիսարիատ են ներկայացրել ՌԴ ծննդյան և ամուսնության կեղծ վկայականներ՝ ՌԴ-ում իբր ամուսնանալու և համատեղ կյանքի ընթացքում երեք երեխա ունենալու վերաբերյալ: Ներկայացված կեղծ փաստաթղթերի հիման վրա, ՀՀ ՊՆ միջգերատեսչական հանձնաժողովը վերջ նշված անձանց տրամադրել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ կատարել զինհաշվառում (կախված նրանց տարիքից), նրանց կողմից կատարվել են համապատասխան պետական մուծումներ, որից հետո միջգերատեսչական հանձնաժողովի որոշումն ուղարկվել է համապատասխան քննչական բաժին և այդ անձանց վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քննվող քրեական գործերով 2007թ. որոշում է կայացվել դրանց վարույթը կարճելու մասին:

ՀՀ ԿԱ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումները ՌԴ համապատասխան մարմիններին հարցումներ են կատարել, որոնցով հիմնավորվել է, որ վերջ նշված անձանց կողմից զինկոմիսարիատներին ներկայացված ծննդյան և ամուսնության վկայականները կեղծ են, որոնց կապակցությամբ վերցվել են համապատասխան տեղեկանքներ:

22.01.2013թ-ին ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում հակահետախուզության գլխավոր վարչությունից ստացված նյութերի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 325 թդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

30.01.2013թ-ին որոշում է կայացվել դատաձեռագրաբանական փորձարկումներն նշանակելու մասին:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում կատարված նախարկման ընթացքում ՀՀ ՊՆ կենտրոնական զինկոմիսարիատ ուղարկված հարցման արդյունքում պարզվել է, որ 2009թ. մինչև 2012թ. ընկած ժամանակահատվածում 488 քաղաքացիներ նույն եղանակով, այսինքն՝ ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականներ ներկայացնելով, ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից, ստացել տարկետումներ, իսկ 2009թ. առաջ, նույն եղանակով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիների վերաբերյալ ողջ փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով, ոչնչացվել են:

Կատարված հարցումներով պարզվել է, որ 488 քաղաքացիներից 364-ի գործերում առկա են ՌԴ նմուշի ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականներ, իսկ մնացած քաղաքացիների նմանատիպ փաստաթղթերն արտասահմանյան մի շարք այլ երկրների նմուշի են:

15.02.2013թ-ին ՀՀ գլխավոր դատախազության միջոցով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն է ուղարկվել՝ վերը նշված 364 քննաքննիչների ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականների իսկությունը պարզելու համար, որի կատարումը հանձնարարվել է ՌԴ իրավասու մարմիններին:

19.07.2013թ-ին ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ՌԴ իրավապահ մարմիններին իրավական օգնության մասին քննչական միջնորդություն է ուղարկվել ՌԴ նմուշի ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականների իսկությունը պարզելու համար, սակայն 2013թ. սեպտեմբերի 18-ին այն ետ է ստացվել՝ ՌԴ յուրաքանչյուր տարածաշրջանի վերախմբավորելու, առանձին-առանձին համապատասխան միջնորդություններ նախապատրաստելու և ուղարկելու համար, որից հետո միջնորդությունները խմբավորվել են ըստ ՌԴ 29 տարածաշրջանների և նույն թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ գլխավոր դատախազության միջոցով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ միջնորդությամբ ուղարկվել են ՌԴ իրավասու մարմիններին:

06.08.2014թ.-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ արտաքին կապերի վարչության միջոցով համապատասխան հարցում է ուղարկվել Վրաստանի իրավասու մարմին՝ 244 ծննդյան և ամուսնության վկայականների իսկությունը պարզելու նպատակով, ինչին պատասխան է ստացվել, որ նշված հարցմանը Վրաստանի իրավապահ մարմինների աշխատակիցները չեն կարող պատասխանել հարցման ծավալի պատճառով, և այդ իսկ պատճառով էլ հետ են ուղարկել, որից հետո նշված քննչական միջնորդությունը Վրաստանի իրավասու մարմիններին 08.06.2015թ.-ին ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազության միջոցով, սակայն մինչ օրս պատասխան չի ստացվել:

Քսցի այդ, 12.06.2015թ.-ին և 26.06.2015թ.-ին քննչական միջնորդություններ են ուղարկվել Չեխիայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Ուզբեկստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի Հանրապետության, \*Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի Հանրապետության, Հունաստանի Հանրապետության, Թուրքմենստանի Հանրապետության, Իսպանիայի Թագավորության, Բուլղարիայի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ավստրիայի Հանրապետության, Բելգիայի Թագավորության, Սերբիայի Հանրապետության և Նիդերլանդների Թագավորության իրավապահ մարմիններին՝ ավյալ պետության պետական մարմինների անունից տրված ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականների իսկությունը պարզելու համար, սակայն նշված հարցումների պատասխանները նույնպես չեն ստացվել:

09.02.2017թ. որոշում է կայացվել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին:

14.02.2017թ. որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին՝ հանցանք կատարած անձը հայտնի չլինելու հիմքով:

23.03.2018թ. ՀՀ կենտրոնական զինվորական դատախազությունից ստացվել է Հունաստանի հանրապետությունից ուղարկված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության պատասխանը:

Քրեական գործով Հունաստանի հանրապետությունից ուղարկված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության պատասխանը և առդիր փաստաթղթերը հոճարեն լեզվով են, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով և այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ ու հաշվի առնելով, որ Թագավոր Համբիկի Ամբակունյանը (AM 0211163 անձնագիր, հաշվառված

ք. Վանաձոր, Շիրակի խճ., շ. 60, քն. 37 հասցեում) որակավորված թարգմանիչ է, ունի բարձրագույն կրթություն, հանդիսանում է հունարեն լեզվի լիցենզավորված թարգմանիչ, ազատ տիրապետում է հայերեն և հունարեն գրավոր ու բանավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 12-րդ կետով, 88-րդ հոդվածի 2-րդ մասով, 96-րդ և 83-րդ հոդվածի պահանջներով,

**ՈՐՈՇԵՑԻ՝**

1. Թիվ 58200513 քրեական գործով ստացված հունարեն լեզվով ստացված փաստաթղթերը հայերեն լեզվով թարգմանելու համար, որպես թարգմանիչ ներգրավել Թագվոր Համբիկի Անրակումյանին:

2. Թագվոր Համբիկի Անրակումյանին պարգարանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, 88-րդ հոդվածով սահմանված՝ քրեական դատավարությանն իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին վարույթն իրականացնող մարմնին հայտնելու պարտականությունը, 96-րդ հոդվածով սահմանված քրեական գործով վարույթին թարգմանի մասնակցությունը բացառող հանգամանքները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ԲՆՆԻՉ

Ն.Վ.ՇԱՀԻՆՅԱՆ

Որոշմանը ծանոթացալ՝

Թարգմանիչ՝

Թ.Հ.Անրակումյան

« 06 »  04  2018թ.

ՈՐՈՇՈՄ

*Թարգմանիչ հրավիրելու մասին*

14 մարտի 2018թ.

քաղ. երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ՝ Ա.Գրիգորյանս, վերանայելով վարույթիս թիվ 58164817 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Սույն քրեական գործը հարուցվել է 2017 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հանցանիշներով՝ անհայտ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործման եղանակով անհատ ձեռնարկատեր Հայկ Դավիթի Օհանջանյանից առանձնապես խոշոր չափերի՝ 5.894.356 ՀՀ դրամին համարժեք 12.170 ԱՄՆ դոլար հափշտակելու դեպքի առթիվ:

2018թ. հունվարի 8-ին նախաքննություն կատարելու համար քրեական գործը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն, որտեղ ընդունվել է վարույթ:

Նախաքննությամբ պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Հայկ Դավիթի Օհանջանյանը 2017թ. հոկտեմբեր ամսին փայլաթիթեղ ձեռք բերելու նպատակով «Alibaba.com» կայքում փնտրել է մատակարար կազմակերպություն և 2017թ. հոկտեմբերի 10-ից իր «hayk.ohanjanyan.88@mail.ru» էլ. փոստով կապ է հաստատել Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետությունում գտնվող «Qingdao Yishichang Import and Export» ORT CO LTD ընկերության աշխատակից ներկայացած ոմն Դենիսի հետ, էլեկտրոնային փաստի միջոցով բանակցություններ է վարել վերջինիս՝ «info@qdyishichang.com» էլ. փոստի հասցեի միջոցով, պայմանավորվածություն է ձեռք բերել 5 տոննա փայլաթիթեղ մատակարարելու վերաբերյալ, ինչից հետո ոմն Դենիսի կողմից էլեկտրոնային փոստով տրամադրված «HUA XIA BANK (QINGDAO BRANCH) CHINA, QINGDAO, SWIFT: HXBKCNBJ05A, Acc: 12051000000564183, 3/CN/QINGDAO, 2/NO886 TONGAN ROAD LAOSHAN DISTR» ռեկվիզիտներով բանկային հաշվեհամարին 2017թ. նոյեմբերի 29-ին 6.000 ԱՄՆ դոլար և 2017թ. դեկտեմբերի 4-ին 6.170 ԱՄՆ դոլար, ընդհանուր՝ 12.170 ԱՄՆ դոլար գումարը, «Արարատբանկ» ԲԲ ընկերության միջոցով փոխանցել է նշված հաշվեհամարին, սակայն պայմանավորվածությամբ նախատեսված ժամանակահատվածում չինական ընկերությունը մատակարարումը չի իրականացրել, վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է փոխանցված 5.894.356 ՀՀ դրամին համարժեք 12.170 ԱՄՆ դոլար գումարը և դադարեցրել շփումը:


2018թ. փետրվարի 21-ին քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության իրավասու մարմիններին:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրավական օգնություն ցույց տալու մասին հարցման նյութերը թարգմանել չիներեն լեզվով, իսկ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Աննա Վալերիի Կրիվոուչկոն ազատ տիրապետում է չիներեն լեզվին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.


ՈՐՈՇԵՑԻ

Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Աննա Վալերիի Կրիվոնոչկոին, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ քննչական կոմիտեի հասրկապետ  
կարևոր գործերի քննության գլխավոր  
վարչության ՀԿԳ քննիչ՝



Ա. Գրիգորյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և  
պարտականությունները ինձ պարզաբանված են  
Թարգմանիչ՝  Ա. Կրիվոնոչկո

«    » մայրի 2018թ.